ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/45

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 20.06.2021թ.),

«Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 06.07.2021թ.),

քննելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» և «ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ. ներկայացված (30.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը և «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի

կողմից 01.07.2021թ. ներկայացված (02.07.2021թ. վարույթ ընդունված) համանման բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/45 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.06.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1. *«բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.*

1.2 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.06.2021 թվականին հրապարակել է թիվ «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

1.3 Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.06.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ փաստվել է այն հանգամանքը, որ մասնակիցների՝ այդ թվում, «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օենսդրությամբ սահմանված կարգով:

1.4 Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 17.06.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ նշվել է, որ հայտերը բացվելուց հետո ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջագիրը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրության հիմքով և տեխնիկական բնութագրի վերանայման արդյունքում իհայտ են եկել որոշ թերություններ՝ մասնավորապես տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվում, որ ներկայացված ապրանքները պետք է մատակարարի հաղթող մասնակիցը, ապա տեղադրի և ծրագրավորի, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, պայմանագրի հետագա արդյունքի խնդիրներից խուսափելու համար:

1.5 Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 18.06.2021 թվականին հրապարկվել է թիվ «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2.*բողոքի իրավական և փաստական հիմնավորումները.*

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հրավերում՝ այդ թվում, հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրում փոփոխություններ կարող են կատարվել յուրաքանչյուր անձի կողմից գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացված հիմնավորումների հիման վրա մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացույցային օր առաջ, եթե ներկայացված հիմնավորումներն համարվել են ընդունելի:

Օրենսդրի կողմից գնման ռարկայի տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու և դրանք ընդունելի կամ անընդունելի համարելու համար նախատեսված օրենսդրական ժամկետները

ինքնանպատակ չեն, դրանք ուղղված են ապահովելու մրցակցությունը և բացառելու խտրականությունը: Հակառակ դեպքերում գնման ընթացակարգի ցանկացած փուլում յուրաքանչյուր անձ կարող է ներկայացնել ենթադրյալ հիմնավորումներ տեխնիկական բնութագրի վերաբերյալ ստեղծելով անհարկի խոչընդոտներ, մյուս մասնակիցների համար և/կամ պատվիրատուի կողմից կարող է ցանկացած փուլում արհեստականորեն անհարկի միջամտություններ կատարվեն գնման ընթացակարգում, որը ազդի մրցակցության վրա:

Սույն դեպքում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի բացումից հետո ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջագիրը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը, որոշել է չկայացած հայտարարել գնման ընթացակարգը այն հիմքով, թե՞ իբր այն տարակերպ մեկնաբանության կարող է ենթարկվել և պայմանագրի կատարման փուլում ստեղծվել խոչընդոտներ, որը ակնհայտ ոչ իրավաչափ է: Օրենսդիրը սահմանել է հստակ ժամկետներ բնութագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ, որը հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացույցային օր առաջ է, այսինքն հայտերի բացումից հետո առկա չէ օրենսդրական հնարավորություն գնման առարկայի տեխնիկական բնութագրի վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու համար: Հատկանշական է այն հանգամանքը, որ ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ն մինչ հայտ ներկայացնելը չի ներկայացրել հիմնավորումներ գնման առարկայի տեխնիկական բնութագրի վերաբերյալ և ինչ պատահեց, որ միայն հայտերի բացումից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ ընտրված մասնակից պետք է ճանաչվի «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը, այլ ոչ թե ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ն, նոր միայն գիտակցեց, որ կարելի է ներկայացնել հիմնավորումներ: Նշվածին իրավական գնահատական տալու համար կարելի է ենթադրել, որ ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ն նախապես գիտեր, թե՞ պայմանագրի շրջանակում ինչ ծառայություն է Պատվիրատուն ակնակալում, կամ իր գործողությունները, ուղղված են միայն «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերության համար խոչընդոտներ ստեղծելու համար, որը հստակ իրականցվեց Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից: Ամփոփելով նշեմ, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չուներ հայտերը բացելուց հետո գնման առարկայի տեխնիկական բնութագրի վերաբերյալ հիմնավորումներ

ընդունելու և այն ընդունելի կամ ոչ ընդունելի դիտարկելու համար, քանզի գործող օրենսդրությամբ առկա է ժամկետների հստակ սահմանափակում:

Անդրադառնալով բողոքի երկրորդ հիմնավորմանը հայտնեմ, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրից ակնհայտ պարզ է, որ գնանշման հարցումը կատարվել է ծառայություններ ձեռք բերելու համար, այլ ոչ թե ապրանքներ գնելու և ծառայություններ ձեռք բերելու համար, որով պայմանավորված պետք է արձանագրել, որ կամ Պատվիրատուի կողմից ընթացքում տեղի է ունեցել դիրքորոշման փոփոխություն՝ իր կարիքների գնահատման վերաբերյալ, կամ ոչ ցանկալի անձ է ներկայացրել նվազագույն գնային առաջարկ, ում հնարավոր չի եղել ներկայացնել հրավերում չներառված ապրանքների մատակարարման պահանջ: Երկու դեպքում էլ գործ ունենք մրցակցության սահմանափակման, գործող օրենսդրական կարգի խախտման և ոչ իրավաչափ վարքագծի հետ: Ավելին գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու համար օրենսդիրը սահմանել է սպառիչ պայմաններ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Նշված հոդվածի վերլուծությունից ակնհայտ է, որ օրեսդիրը սահմանել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու սպառիչ պայմաններ, որոնցից է այն պահանջը, որը վերաբերվում է հայտերից ոչ մեկը հրավերի պահանջներին չհամապատասխանելուն, սույն դեպքում գնաման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.06.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ փաստել է, որ ներկայացրած բոլոր հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին, ուստի այս հիմքով գնման ընթացակարգը չի կարող չկայացած համարվել, երկրորդ գնման պահանջը առկա է և երրորդ կետով նախատեսված դրույթը նույնպես կիրառելի չէ քանզի հայտեր ներկայացված են: Գնման ընթացակարգը չկայացած է ճանաչվել պայմանագիր չկնքելու հիմքով, որի նման գնահատականը առնվազն տարակուսանք է առաջացնում նշված դրույթը վերաբերվում է այն դեպքերին, երբ մասնակիցը չի կնքել պայմանագիրը, այլ ոչ թե այն դեպքերին, որ երբ Պատվիրատուն չցանկանա շարունակել գնման ընթացակարգը

նշի, որ պայմանագիր չի կնքելու: Այս մասին երկար մեկնաբանությունները նույնիսկ վիրավորական պետք է լինեն իրավաբանական գիտելիքներ ունեցող անձանց համար:

Ավելին նշեմ սույն դեպքում կիրառելի է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված կարգավորումները: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

2. Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Նույն օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Վերոգրյալի համապարփակ վերլուծության արդյունքում պետք է փաստել այն, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից հայտ ներկայացնելը և պատվիրատուի կողմից այն բավարար գնահատելն ու մասնակցին հաղթող ճանաչելը վկայում են կնքման ենթակա պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունը ձեռք բերելու մասին, իսկ պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը մասնակցին ուղարկելը նշանակում է օֆերտան ուղարկված, որի ակցեպտավորման հիմքով անթույլատրելի է դրա հետկանչելիությունը: Նշվածը դիտարկելով Գնման ընթացակարգի համատեքստում պետք է փաստել, որ Պատվիրատուի կողմից գնանշման հարցման հրապարակումից հետո դրա հետկանչելիությունը անհնար է, եթե սահմանված ժամկետում ներկայացվել են գործող օրենսդրությանը և հրավերի պահանջներին համապատասխան հայտեր, որոնցով պայմանավորված պետք է փաստել, որ օֆերտան ակցեպտավորված է:

Նշվածի լույսի ներքո պետք է փաստել, որ պայմանագիրը ոչ թե չի կնքվել, այլ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը օրենսդրական կարգի խախտմամբ հիմք է ընդունել ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջագիրը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը, գնահատել

ընդունելի և դադարեցրել գնման ընթացակարգը, քանզի նա հրապարակել է հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման գնանշման հարցում, բայց ուներ այլ նպատակ և ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ-ի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո նոր միայն հասկացել է, որ ինքն այլ կարիք ունի, ուստի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ջանքերն ուղղված են եղել գնման ընթացակարգը դադարեցնելու և գնման առարկայի տեխնիկական բնութագրի փոփոխմամբ նոր գնանշման հարցում հրավիրելուն: Իսկ պայմանագիր կնքված չլինելը փաստի խեղաթյուրում է, և պաշտոնական դիրքի չարաշահում և ոչ իրավաչափ վարքագիծը ուղղված է մեկ բանի «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությանը շուկայից դուրս թողնելուն, ինչպես կարելի է նախապես չհասկանալ թե ինչ կարիք ունես և հրապարակես գնանշման հարցում ստանաս հայտեր և նվազագույն գին առաջարկած մասնակցի հիայտ գալուց հետո փոշմանես և փաստի կեղծմամբ նշես, որ պայմանագիր չի կնքվել, իսկ արդյո՞ք հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշումը, լրացել է անգործության ժամկետը: Նշվածից հետո նոր միայն հնարավոր կլիներ խոսել պայմանագիրը չկնքված լինելու մասին:

3.*Բողոքի պահանջը*

Առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով խնդրում եմ՝

Դադարեցնել թիվ «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2021 թվականի թիվ 3 արձանագրությունը և 18.06.2021 թվականին հրապարկված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի համանման բողոքով ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ն 01.07.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝

2-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով ս.թ. հունիսի 16-ի հայտերը բացելուց հետո «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջագիրը, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը այն մասին, որ տեխնիկական բնութագրի վերանայման արդյունքում ի հայտեն եկել որոշ թերություններ՝ մասնավորապես տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվում, որ ներկայացված ապրանքները պետք է մատակարարի հաղթող մասնակիցը, ապա տեղեկադրի և ծրագրավորի, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած, պայմանգրի հետագա արդյունքի խնդիրներից խուսափելու համար:

3-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է նոր «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ընդամենը հիմք ընդունելով «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը այն մասին, որ տեխնիկական բնութագրի վերանայման արդյունքում ի հայտեն եկել որոշ թերություններ՝ մասնավորապես տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվում, որ ներկայացված ապրանքները պետք է մատակարարի հաղթող մասնակիցը, ապա տեղեկադրի և ծրագրավորի, ուստի գնահատող հանձնաժողովը միայն դրա հիման վրա որոշել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Գտնում ենք, որ նաև նման պայմաններում «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չպետք է ընդուներ որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ, քանի որ տվյալ պարագայում

առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով Ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքը:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մասնավորապես Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ կամայականորեն չկայայացած հայտարարելով գնման ընթացակարգը և խախտելով տվյալ ընթացակարգի մասնակիցների իրավունքները և օրինական շահերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1.Պարտավորեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ բողոքներ քննող անձ,

Ինչպես հայտնել ենք ներկայացրած բողոքով, «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը գնահատող հանձնաժողովի

կողմից ոչ իրավաչափ, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտմամբ, հայտարարվել է չկայացած:

Վերոհիշյալ ընթացակարգը չկայացած հակտարարելուց հետո գնահատող հանձնաժողովը նույն ծառայությունները ձեռքբերոելու նպատակով հայտարարել է նոր՝ «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Ներկայացված բողոքով ներկայացրել ենք երկու պահանջ՝

1.Պարտավորեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ չկայացած հայտարարել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Հաշվի առնելով, որ բողոքը վերաբերում է երկու ընթացակարգերին հավասարապես, դրանք միմյանց հետ փոխկապակցված են, ուստի խնդրում ենք կասեցնել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թե՛ «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» և թե՛ «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգերը»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Որպես բողոքով վիճարկվող ծածկագրեր նշվել են՝

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Սույն բողոքի ճշգրտմամբ հայտնում ենք, որ բողոքով ներկայացված երկրորդ ընթացակարգի ծածկագրում թույլ է տրվել վրիպակ, ուստի խնդրում ենք որպես բողոքով

ներկայացված «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/5» ծածկագրի փոխարեն կարգալ «ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագիրը:

Այլ կերպ ասած, որպես բողոքով ներկայացված գնման ընթացակարգի ծածկագիր և առարկա ընդունել հետևյալը.

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ կարիքների համար՝ հակահրդեհային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՊՀ- ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ»:

«Սou Սիսթեմս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.07.2021թ. թիվ 426 գրությամբ հայտնել է հետևյալը.

Ի պատասխան «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի տեղեկացնում եմ, որ ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից գնահատող հանձնաժողովին տրամադրվել է գրություն, համաձայն որի ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում ի հայտ են եկել թերություններ, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են ապրանքների մակնիշներ առանց «կամ համարժեք» բառերի, ինչպես նաև տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվել, որ ծառայությունը մատուցելու համար անհրաժեշտ ապրանքները պետք է մատակարարվի կատարողի կողմից, ապա տեղադրվի և ծրագրավորվի, ինչպես նաև համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների

գործընթացի կազմակերպման մասին կարգի 23-րդ կետի 8-րդ ենթակետի՝ «գնման ընթացակարգը որպես ապրանքի, կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը»: Տվյալ գործընթացում ապրանքների համար նախատեսված գնի տեսակարար կշիռը գերազանցում էր տեղադրելու և ծրագրավորելու համար գնի տեսակարար կշռին: Հաշվի առնելով վերոգրյալը, որը ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեպքում էական խնդիրներ էր առաջացնելու թե պատվիրատուի և թե պայմանագրի կողմի մոտ, գնահատող հանձնաժողովը ի սկզբանե որոշում էր կայացրել գնման ընթացակարգը չկայացած հայտարարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Սակայն, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526- Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 58-րդ կետի, «ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա»: Այս որոշումը հնարավոր չէր կայացնել, քանի որ ինչպես տվյալ պահին էլ հիմա հիմնադրամը չունի հոգաբարձուների խորհուրդ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը չկայացած հայտարարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի համանայն՝ պայմանագիր չի կնքվում: Ի պատասխան «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 23-րդ կետի 8-րդ ենթակետի՝ «գնման ընթացակարգը որպես ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը», տվյալ գործընթացում ապրանքների համար նախատեսված գնի տեսակարար կշիռը գերազանցում է տեղադրելու և ծրագրավորելու համար նախատեսված գնի տեսակարար կշռին, ուստի գործընթացը որպես ծառայություն դադարում է գոյություն ունենալ: 2021թ.-ի հունիսի 18-ին ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուց հետո հունիսի 21-ին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գնումների պլանում կատարվել է համապատասխան փոփոխություն, այնուհետև համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 23-րդ կետի 8-րդ ենթակետի կազմակերպվել է ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5 ծածկագրով գնման ընթացակարգ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» և «Սou Սիսթեմս» ՍՊ ընկերությունները:

3. «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով և «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ն համանման բողոքով վիճարկում են Պատվիրատուի կողմից «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով չկայացած հայտարարելու մասին որոշման իրավաչափությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով հունիսի 16-ին՝ հայտերը բացվելուց հետո «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջագիրը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը, այն մասին, որ տեխնիկական բնութագրի վերանայման արդյունքում ի հայտ են եկել որոշ թերություններ՝ մասնավորապես տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվում, որ ներկայացված

ապրանքները պետք է մատակարարի հաղթող մասնակիցը, ապա տեղադրի և ծրագրավորի, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, պայմանագրի հետագա արդյունքի խնդիրներից խուսափելու համար:

6. Նույն արձանագրությամբ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը որոշվել է հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմքով:

7. Պատվիրատուի կողմից 18.06.2021թ. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) հրապարակվել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն, համաձայն որի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

8. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից հակահրդեհային սարքերի ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 22-ի որոշմամբ հայտարարվել է «ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի 29.06.2021թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի 01.07.2021թ. համանման բողոքը՝ կից փաստաթղթերով, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 07.07.2021թ. թիվ 426 գրությունը՝ կից նյութերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:

Նույն մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 14-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Եվ այսպես, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հակահրդեհային սարքերի տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» և «Սօս Սիսթեմս» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ հիմք ընդունելով հունիսի 16-ին՝ հայտերը բացվելուց հետո «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջագիրը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը, այն մասին, որ տեխնիկական բնութագրի վերանայման արդյունքում ի հայտ են եկել որոշ թերություններ՝ մասնավորապես տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվում, որ ներկայացված ապրանքները պետք է մատակարարի հաղթող մասնակիցը, ապա տեղադրի և ծրագրավորի, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, պայմանագրի հետագա արդյունքի խնդիրներից խուսափելու համար:

Նույն արձանագրությամբ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը որոշվել է հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմքով:

Արդյունքում՝ Պատվիրատուի կողմից 18.06.2021թ. Տեղեկագրում հրապարակվել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն, համաձայն որի՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից հակահրդեհային սարքերի ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 22-ի որոշմամբ հայտարարվել է «ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Այսպիսով՝ «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով և «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ն համանման բողոքով վիճարկում են Պատվիրատուի կողմից «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով չկայացած հայատարարելու մասին որոշման իրավաչափությունը:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները և Ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքերը՝ հայտնում եմ հետևյալը.

Հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև չկայացած հայտարարելու պայմանները:

Ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով ի սկզբանե նախատեսվել են գնման առարկայի այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք հայտերը բացվելուց հետո «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի 16.06.2021թ. պահանջագրի համաձայն՝ վերանայվել են Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից և արդյունքում վերջինիս կողմից արձանագրվել է, որ ի հայտ են եկել որոշ թերություններ, մասնավորապես՝ «տեխնիկական բնութագրով սահմանվել են ապրանքների մակնիշներ առանց «կամ

համարժեք» բառերի, ինչպես նաև տեխնիկական բնութագրով հստակ չի սահմանվել, որ ծառայությունը մատուցելու համար անհրաժեշտ ապրանքները պետք է մատակարարվի կատարողի կողմից, ապա տեղադրվի և ծրագրավորվի, ինչպես նաև համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 23-րդ կետի 8-րդ ենթակետի՝ «գնման ընթացակարգը որպես ապրանքի, կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը»: Տվյալ գործընթացում ապրանքների համար նախատեսված գնի տեսակարար կշիռը գերազանցում էր տեղադրելու և ծրագրավորելու համար գնի տեսակարար կշռին»:

Ամփոփելով վերոգրյալը պատասխանատու ստորաբաժանումն առաջարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղարկել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը, որպեսզի կատարվի անհրաժեշտ հստակեցումներ՝ պայմանագրի հետագա արդյունքի խնդիրներից խուսափելու համար և որի հիմքով Պատվիրատուի կողմից 18.06.2021թ. Տեղեկագրում հրապարակվել է «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն, համաձայն որի՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմքով:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Պատվիրատուն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, այն է՝ պայմանագիր չի կնքվում, Ընթացակարգը չկայացած հայտարարելով, այն պայմաններում, երբ հայտերը բացվելուց հետո «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրում ի հայտ են եկել որոշ թերություններ, գործել է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջի խախտմամբ, քանի որ նշված հիմքը վերաբերվում է այն դեպքերին, երբ պայմանագրի կնքման նպատակով ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները, սակայն գնման գործընթացի արդյունքներով պայմանագիր չի կնքվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի կողմից 29.06.2021թ. ներկայացված բողոքը և «Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի 01.07.2021թ. համանման բողոքը բավարարել՝

1. պարտավորեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2021 թվականի թիվ 3-րդ արձանագրությունը և «ՇՊՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. պարտավորեցնել «ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**